Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. V, խմբագրական խորհուրդ՝ Ռ. Սաֆրաստյանի ընդհանուր խմբագրությամբ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Ե., 2008, 260 էջ:

Թուրքիայի և ընդհանրապես թյուրքական աշխարհի հետ Հայաստանի հարաբերությունները հետխորհրդային ժամանակաշրջանում հետզհետե դառնում են ավելի հրատապ, ձեռք բերում կենսական նշանակություն: Անվիճելի է նաև թուրքական գործոնի դերի մեծացումը ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում: Բնականաբար, նման իրավիճակում հայ թյուրքագիտության գիտական առաքելության հասարակական - քաղաքական նշանակությունը կտրուկ աճում է: Սխալված չենք լինի, եթե փաստենք, որ այդ ազգանվեր գործում առաջատար դերը կատարում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը և հատկապես նրա տնօրեն պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյանը: Ասվածի հերթական վկայությունը թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտությունների նոր՝ թվով հինգերորդ ժողովածուի հրատարակությունն է:

Եթե ի մի բերենք այս ժողովածուի բոլոր հրատարակությունների բովանդակային կողմը, ապա առաջին հերթին ակնառու են հետազոտությունների որակական աճը, բազմակողմ և նպատակասլաց գիտական հարցադրումների ավելացումն ու համակարգումը: Մեծացել է նաև հրատարակության ծավալը: Ուրախալի է, որ ժողովածուն պահպանում է հայ արևելագիտության նախկին լավագույն ավանդույթները, որը հավակնում է դառնալ միջազգային հրատարակություն: Անշուշտ, ցանկալի կլիներ ընդլայնել արտասահմանյան գործընկերների թիվը, ընդգրկել նոր, մասնավորապես արևմտյան երկրների հետազոտողներ: Գուցե եկել է նաև թուրք հետազոտողների հետ համագործակցելու ժամանակը:

Ժողովածուն ունի կուռ և կայուն կառուցվածք: Գիտական բոլոր հարցադրումները և նյութերը համակարգված են երեք կարևոր բաժիններում՝ օսմանագիտություն, թյուրքագիտություն և հայ-թուրքական հարաբերություններ: Օսմանագիտության բաժնում ընդգրկված է հինգ հոդված: Առաջին հոդվածում նշանավոր արևելագետ Վահան Բայբուրդյանը հանգամանորեն վերլուծում է XVI-XVII դարերում թուրքական գործոնի դերը Իրան – Եվրոպա քաղաքական հարաբերություններում: Վկայակոչված նյութերը և փաստարկներն ապացուցում են, որ Իրանի, եվրոպական երկրների և Ռուսաստանի մասնակցությամբ հակաօսմանյան միասնական ճակատի ստեղծումը չկայացավ նրանց միջև առկա վիթխարի հակասությունների պատճառով: Արժեքավոր է նաև հեղինակի այն դիտարկումը, որ հայ վաճառականությունը հակաօսմանյան դաշինքի ստեղծմանը մասնակցում էր ոչ միայն տնտեսական շահերի, այլև օսմանյան լծից ազատագրվելու համար:

Օսմանյան պատմության նույն դարաշրջանին է անդրադառնում վրաց օսմանագետ Միխայիլ Սվանիձեի հակիրճ հոդվածը: Հեղինակն անդրադառնում է 1535 թ. Հայաստանում Էրզրումի փաշայության ստեղծմանը և նրա կազմում, հեղինակի կարծիքով, վրացական հողերի ընդգրկմանը: Անշուշտ, ցանկալի կլիներ՝ առավել խորությամբ մատուցվեր նյութը, վերլուծվեր տվյալ դարաշրջանում Էրզրումի փաշայության սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական կացությունը: Մյուս կողմից՝ հեղինակը, հետևելով արդեն տխուր դարձած ավանդույթին, Օսմանյան տերությունն անվանում է Թուրքիա, որն ընդունելի չէ: Նույն մոտեցումն առկա է նաև ռուս պատմաբան Սերգեյ Մուրտուզալիևի հոդվածում: Ճիշտ է, այս հոդվածը, որի նյութը XVIII դ. «Ռուսաստանի պատմություն»

խորագրով հրատարակություններում օսմանյան և բուլղարական թեմաների քննությունն է, ունի ճանաչողական մեծ արժեք: Հեղինակը կարողացել է վեր հանել Ռուսաստանում Օսմանյան տերության և Բուլղարիայի մասին մակերեսային պատկերացումների պատճառները և այդ առումով կարելի է համաձայնել նրա եզրակացությունների հետ: Մյուս կողմից՝ մեզ համար ընդունելի չէ Ս. Մուրթուզալիևի և նրա վկայակոչած պատմաբանների այն կարծիքը, համաձայն որի՝ թուրքերն իսլամը բռնությամբ տարածելու քաղաքականություն չեն վարել (էջ 46): Կրոնական հանդուրժողականության այն քաղաքականությունը, որն ի սկզբանե ձևավորվել էր Օսմանյան տերությունում, իր մեջ ներառում էր հպատակ ժողովուրդներին բռնությամբ հավատափոխ անելու և թուրքացնելու մի կուռ համակարգ:

Պատմագիտության մեջ ընդհանուր ճանաչում գտած այս երկրորդ տեսակետը մի անգամ ևս հիմնավոր ապացուցում են Ռ. Սաֆրաստյանը և Ա. Հովհաննիսյանը ժողովածուի նույն բաժնում զետեղված իրենց արժեքավոր հոդվածներում (էջ 56-83): Ռ. Սաֆրաստյանն անդրադառնում է հենց նույն Բուլղարիայի օրինակին: Փաստական հարուստ նյութերի հիման վրա կատարած վերլուծությունը նրան հանգեցնում է այն հաստատ համոզման, որ Թանզիմաթի դարաշրջանում օսմանյան իշխանությունների բուն նպատակը բարեփոխումների կամ բռնության միջոցներով հպատակ ազգերի օսմանականացումն է (թուրքացու-մը), վերջին հաշվով ազգային պատկանելության վերացումը: Բռնության և հարկադրանքի պահն ակնառու է նաև օսմանյան աղբյուրներում: Այդպիսի մի սկզբնաղբյուր է օսմանյան պաշտոնական պատմաբան Ահմեդ Զևդեթի գրառումները («Մարուզաթ» / «Զեկուցագրեր», «Զեկույցներ»), որը հակիրճ, բայց բովանդակալի վերլուծության է ենթարկել Ա. Հովհաննիսյանը: Հարևանցիորեն նկատենք. ողջունելի է, որ Ռ. Սաֆրաստյանը և Ա. Հովհաննիսյանն իրենց հոդվածները հրատարակել են անգլերենով և ռուսերենով: Քանի որ ինչպես ռուս, այնպես էլ արևմտյան արևելագետների մեծ մասն իրեն նեղություն չի տալիս ծանոթանալու Օսմանյան կայսրությանն առնչվող հայ արևելագետների և պատմաբանների հայալեզու ուսումնասիրություններին:

Հարցադրումների առանձնահատուկ բազմազանությամբ է աչքի ընկնում նաև ժողովածուի երկրորդ՝ բուն թյուրքագիտության բաժինը: Այն սկսվում է ուկրաինացի պատմաբան Վլադիմիր Գուսակովի շատ ուշագրավ հոդվածով, որը նվիրված է VI-VII դդ. Կենտրոնական Ասիա թյուրքական ցեղերի ներխուժմանը և տեղական բնակչության հետ նրանց հարաբերություններին: Հեղինակի շեշտադրումը քաղաքական պատմության հարցերն են, որը նա վերլուծում է հաջողությամբ: Բավական ճշգրիտ է տրված Թյուրքական կագանատի քաղաքական պատմությունը, որը, հիրավի, արմատապես փոխեց միջազգային կացությունը VI-VII դդ.: Ակնհայտ է, որը նշյալ դարերում տեղի է ունեցել դրամատիկ քաղաքակրթական բախում եկվոր հոների (հեփթաղների), վաչկատուն թյուրքական ցեղերի և նստակյաց կյանքով ապրող տեղացիների միջև: Բնիկների հողերի անվանումները հոդվածում կարծես թե ներկայացվում են որպես իշխանական տիրույթներ կամ աշխարհագրական անուններ: Հավանաբար հեղինակն այդպիսի բախման քաղաքակրթական բովանդակությանը, ինչպես նաև բնիկների ազգային պատկանելությանը չի անդրադարձել աղբյուրների սղության պատճառով: Մինչդեռ քաղաքական գործընթացներում այդ գործոնները կարևոր դեր են խաղում: Ավելորդ չէր լինի նաև նշել (գոնե ծանոթագրության կարգով) Սմբատ Բագրատունու ով լինելը, Կենտրոնական Ասիայում նրա հայտնվելու հանգամանքը:

Ժողովածուի հաջորդ մի քանի հոդվածները վերաբերում են Թուրքիայի պատմությանը: Արշակ Կարապետյանն իր հոդվածում խնդիր է դրել վերլուծել 1924 թվականի սահմանադրության մեջ թուրքական հանրապետական կարգի

ամրագրումը: Անշուշտ, հեղինակին դա հաջողվել է: Այդ ձևով նա փորձում է գնահատական տալ Թուրքիայում հաստատված պետական կարգին, ժողովրդավարության թուրքական ընկալմանը, որը շատ առումներով կանխորոշեց երկրի հետագա տասնամյակների պատմությունը:

Թուրքիայի գաղափարական հիմքի՝ քեմալականության սկզբնավորմանն է նվիրված Վահրամ Տեր-Մաթևոսյանի բավականաչափ վերլուծական և արժեքավոր հոդվածը: Հեղինակը անդրադառնում է քեմալականության կայացման փուլայնացմանը, գաղափարական հստակեցումներին և վերելքին: Նա ճիշտ է վարվում, երբ փորձում է քեմալականության ակունքները փնտրել իսլամի, պանթուրքիզմի և հատկապես երիտթուրքերի գաղափարներում: Մյուս կողմից՝ քեմալականության հետագա ճգնաժամը, սկզբունքների ճշտումը, այլընտրանքային ընկալումներն ու շարունակվող բանավեճերը պետք է համարել բնական, քանի որ այդպիսին է ցանկացած ազգային գաղափարախոսության բնույթ: Այն համահունչ է հասարակության զարգացման բարդ գործընթացներին: Այդ տեսանկյունից ճիշտ պետք է համարել հեղինակի հետևությունը քեմալականության հետագա ուսումնասիրման անհրաժեշտության մասին:

Ինչ վերաբերում է քեմալականության բուն էությանը, ապա համոզված ենք, որ այն ոչ թե ազգայնական գաղափարախոսություն է, ինչպես այն հաճախ բնութագրում են, այլ ազգայնամոլական: Հենց այդ մասին է վկայում ժողովածուի նույն բաժնում տեղադրված Ռուբեն Մելքոնյանի («Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում»), Աշոտ Սողոմոնյանի («Թուրքական պատմագիտական համագումարների կազմակերպման նպատակների շուրջ»),Արթուր Դումանյանի («Բանակ-հասարակություն փոխհարաբերությունները Թուրքիայում 1960-1970-ական թթ.») և Լևոն Հովսեփյանի («Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 1990-ական թթ., որպես եվրասիական քաղաքականության կարևորագույն ուղղություն, ձեռքբերո՞ւմ, թե՞ ձախողում») հոդվածների նյութերը: Դրանք այս կամ այն չափով ցույց են տալիս քեմալականության ազգայնամոլական տարաբնույթ դրսևորումները Թուրքիայի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ:

Ժողովածուի հաճելի նորույթներից մեկը համարում ենք Ժաննա Անդրեասյանի հոդվածը հետխորհրդային Թուրքմենստանի ժողովրդավարական գործընթացների մասին: Հեղինակին հաջողվել է պահպանել հարցադրման գիտականությունը, ցույց տալ թյուրքական աշխարհում քաղաքական գործընթացների թուրքմենական տարբերակի առանձնահատկությունները: Առհասարակ Կենտրոնական Ասիայի (Միջին Ասիայի) թյուրքական աշխարհը շատ առումներով դեռևս անծանոթ է Հայաստանի արևելագիտությանը: Առ այսօր եղած հրապարակումները հեռու են բավարար լինելուց, ուստի պետք է խրախուսել այդ բնագավառում կատարվող հետազոտությունները:

Օգտակար և ուշադրության արժանի են նաև հայ-թուրքական տարաբնույթ հարաբերություններին նվիրված Հովհաննես Զատիկյանի, Հայկարամ Նահապետյանի, Հասմիկ Ստեփանյանի և Լուսինե Սահակյանի հոդվածները: Անչափ արժեքավոր է Լ. Սահակյանի հրապարակումը համշենահայերի պատմական ճակատագրի և արդի ժամանակներում նրանց ազգային ինքնության յուրահատուկ դրսևորումների մասին: Վկայակոչված նյութերը և դրանց մասին հեղինակի վերլուծությունները մի անգամ ևս ի չիք են դարձնում թուրք և նրանց հետևող թուրքասեր պատմաբանների ջանքերը, որոնք փորձում են Օսմանյան տերությանն ու նրա ժառանգ ժամանակակից Թուրքիային ներկայացնել որպես հպատակ ժողովուրդների բարեգործի ու հովանավորի:

Արձանագրելով այս ժողովածուի անուրանալի գիտական ձեռքբերումները՝ նշենք մեկ-երկու ցանկություն, որոնք կարող են օգտակար լինել հետագայի

համար: Օրինակ՝ լավ կլիներ հոդվածներն ունենային այլ լեզուներով համառոտ ամփոփումներ: Ցանկալի էր նաև՝ տողատակում կամ «Մեր հեղինակները» խորագիր ունեցող բաժնում հոդվածների հեղինակների մասին տրվեր հակիրճ տեղեկանք:

Նշենք մի դիտողություն ևս: Խոսքը գիտական հասկացությունների և անունների օգտագործման միասնական մոտեցման մասին է: Օրինակ՝ եթե օգտագործվում է «ժողովրդավարություն» բառաձևը, ապա հարկ չկա նույն կամ այլ տեղերում օգտագործել «դեմոկրատիա» համարժեքը (էջ 177): Ավելի սկզբունքային հարց է «Աթաթյուրք» (էջ 101) կամ «Աթաթուրք» (էջ 129) անվանման ճիշտ օգտագործումը: Գիտական եզրերի կամ հասկացությունների ոչ միօրինակ օգտագործումը կարող է թյուրընկալման տեղիք տալ:

ՂԼԵՉՅԱՆ Վ. Գ.
Պատմական գիտությունների թեկնածու